ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--սեպտեմբերի 2023 թվականի № -Ա

«ՔԱՋԱՐԱՆ ՄՈՆՏԱԺ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էներգետիկայի մասին» օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվություններն ու այլ տեղեկատվությունը, ինչպես նաև անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը, ներկայացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով,

բ) Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի №308Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելվածի՝ էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգի №2 հավելվածի №2-2 ձևով սահմանված՝ արտադրված էլեկտրական էներգիայի վերաբերյալ տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն) ներկայացման ժամկետը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 25-ն է,

գ) «ՔԱՋԱՐԱՆ ՄՈՆՏԱԺ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի 1-ին կիսամյակի արդյունքներով Տեղեկատվությունը Որոշմամբ սահմանված ժամկետում չի ներկայացրել Հանձնաժողով,

դ) Որոշմամբ սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2023 թվականի օգոստոսի 4-ից Հանձնաժողովն

Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է 2023 թվականի օգոստոսի 4-ի №ԳԲ/34.3-Մ2-4/2755-2023 գրությամբ,

ե) Ընկերությունը 2023 թվականի օգոստոսի 14-ի №03 գրությամբ ներկայացրել է 2023 թվականի 1-ին կիսամյակի Տեղեկատվությունը և վերջինիս ներկայացման ժամկետի խախտման հիմնավորումը, որում նշելով որոշակի տեխնիկական բնույթի խնդիրներ, ըստ էության ընդունել է խախտման փաստն ու հայցել Հանձնաժողովի ներողամտությունը,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Տեղեկատվության ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջը, սակայն մինչև պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ հանձնաժողովի որոշման ընդունումը վերացրել է խախտումը՝ Հանձնաժողով ներկայացնելով 2023 թվականի 1-ին կիսամյակի արդյունքներով Տեղեկատվությունը, որի հետևանքով չի վտանգվել և չէր կարող վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, այն ուղղակիորեն չի հանգեցրել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի (թույլտվության) պայմանների կոպիտ խախտման, այլ կարգավորվող անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտման կամ լիցենզիայի (թույլտվության) պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, և առկա չէ խախտման կատարման կրկնակիություն, ինչպես նաև նախկինում նշված խախտումն ընկերության կողմից թույլ չի տրվել, որի պարագայում, Հանձնաժողովի գնահատմամբ, հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել Ընկերության նկատմամբ Որոշմամբ սահմանված՝ պահանջի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2023 թվականի օգոստոսի 4-ին հարուցված վարչական վարույթը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական

դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
--սեպտեմբերի 2023թ.